# Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ

**«14» ՀՈՒՆՎԱՐԻ 2013 Թ. N 1-Ա ՀՐԱՄԱՆԻՑ**

## ԿԱՐԵՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և 2-րդ մասով, 39-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի «Ծառայողական քննություն նշանակելու և անցկացնելու կարգը հաստատելու մասին» թիվ ՔՀ-46-Ն հրամանի N 1 հավելվածի 31-րդ կետի 1-ին ենթակետը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 18-ի «Ծառայողական քննություն նշանակելու մասին» N 188-Ա հրամանի համաձայն Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկում անցկացված ծառայողական քննության նյութերի ուսումնասիրության արդյունքներով ներկայացված եզրակացությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ  Ե Մ՝

1. Ծառայողական պարտականություններն անհարգելի պատճառով չկատարելու համար Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի օպերատիվ բաժնի պետ Կարեն Լևոնի Կիրակոսյանի նկատմամբ կիրառել ծառայությունից ազատում կարգապահական տույժը և 2013 թվականի հունվարի 14-ից նրան ազատել քրեակատարողական ծառայությունից:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ**

## Ց Ո Ւ Ց Ո Ւ Մ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N 1917-Ն որոշման N 1 հավելվածի 12-րդ կետի դ) ենթակետով.

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության պետ Հ. Հարությունյանին՝

1) հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկում անցկացված ծառայողական քննության արդյունքներով ներկայացված եզրակացությունը՝ քննարկել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի պետի տեղակալ Ռաֆայել Սերգեյի Միքայելյանին, անվտանգության ապահովման բաժնի պետի տեղակալ Կարեն Հենրիկի Միրզոյանին, հերթապահ խմբի պատասխանատու հերթապահ Սմբատ Հենրիկի Հակոբյանին և անվտանգության ապահովման բաժնի երկրորդ կարգի մասնագետ Նորայր Գարիկի Մկրտչյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը.

2) արդյունքների մասին 5-օրյա ժամկետում զեկուցել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին:

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ